մուտ եղաւ Ս. Աջը գտնելու, անշուշտ, նորա հետամտութիւնը մի թագաւորի վայել միջոցներով էր լինում, սակայն մեզ հաւաստի յայտնի չէ, թէ ինչ ճանապարհով գտաւ նա և Եգիպտոսից վերադարձուց Ս. Լուսաւորչի Աջը։ Մեր հին ձեռագրների յիշատակարաններում շատ ենք կարդում օրինակներ, որ բարեպաշտական և աստուածահաճոյ գործ էին համարում մեր նախնիք ինչպէս գերիներ ազատելը, նմանապէս և իբրև աւար անօրէնների ձեռքն ընկած աջերը, խաչերը, աւետարաններն և այլն։ Հեթումի պէս կրօնասէր թագաւորի համար շատ բնական էր ուրեմն իբրև հոգեշահ գործ հետամուտ լինել և գնել, թափել գերութիւնից Հայոց սրբութիւններն և ազատուել մահմետականների և այլ ազգերի նախատինքից։ Այդպիսով հաւանական է կարծել, որ Հեթումին յաջողուել է վերադարձնել, եթէ ոչ բոլոր, գէթ նշանաւոր սրբութիւնները։ Առաքել Դաւրիժեցին մի տեղեկութիւն է հաղորդում, որ աւելի տեղիք է տալիս այսպէս կարծելու։ Նա ասում է, որ երբ Ս. Լուսաւորչի աջը տարան Եգիպտոսի սուլթանի ապարանքը, մահ ընկաւ այնտեղ։ այնպէս որ անթիւ անհամար մարդիկ էին մեռնում։ այդ մահը դադար չառաւ, մինչև որ «դարձուցին զաջ ձեռն սուրբ Լուսաւորչին Գրիգորի յերկիրն Կիլիկիոյ առ բարեպաշտ թագաւորն Հեթում։» այս տեղեկութիւնը Դաւրիժեցին կարդա-